

ՆԱՄԱԿ ՅԱԼՅԻՍԱՅԻ

Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՄՍԱԳՐՈՅՍ.


«Ժողովրդական դպրոցն Ախլցխոյ հանգուցեալ Կարապետ Արքեպիսկոպոսի մահուանէն մինչեւ ցայսօր կնամանէր այն նաւին՝ որ ծովագնացութեան ատեն դառնագոյն շնչմանէ հիւսիսային հողմոց՝ կատաղի ալիքների վրայ կտարուբերուէր այսր եւ անդր, եւ նաւամուտքն դիտելով եւ երեւակայելով հեռու եղած բազմածաղիկ լեռանց միանգամայն եւ վայելչագեղ հովիտների շքեղազարդ գեղեցկութիւններն, կիսափագէին սքանչելապայծառ տեսութեան նոցին, չէին ձեռնհաս հասանել եւ երջանկանալ, մինչդեռ մերձակայ եւ հեռաւոր նաւուց ամենայաջող սրընթաց արշաւանքներն կդիտէին դէպ ի նաւահանգիստն ի ձեռն ճարտարահմուտ նաւավարաց: Ուր ուրեմն նաւորդները իբր ի քնոյ զարթուցեալ՝ բարւոք համարեցին նոյն ալետանջ նաւն ապաստան առնել այլ ճարտարագոյն ղեկավարի եւ նաւաստեաց, յուսալով այնու գտանել այցելութիւն: Այսպէս եւ ժողովրդական դպրոցն Հայոց Ախլցխայ յետ բազմամեայ դժբաղդութեան իւրոյ եր-

ջանկացաւ աժմէն՝ մինչ կարգեցաւ անոր հոգաբարձու բարեծնունդ եւ ազգասէր Աղա Կարապետն Մուծաֆեանց, այր հանձարեղ եւ բարեպաշտօն վարուքն եւ բարուք, գովանի, հեզ եւ բարեսէր, փոյթ ի յառաջադիմութիւն ազգայնոց, որպէս քրտնաջան հոգաբարձու նահանգական Ուսումնարանին Ռուսաց, նոյնպէս եւ եկեղեցական Ուսումնարանին Հայոց. եւ ամենագովելի ջանացողութեամբ սոյն արժանայիշատակ անձին խոստանայ ժողովրդական Ուսումնարանն Հայոց Ախլցխոյ մատուցանել այսուհետեւ անուշահամ եւ զուարճալի պտուղներ՝ ազգիս փառաւորութեան՝ պայծառութեան եւ օգտակարութեան համար:

«Խնդրելով ի տիպ արձանացուցանել այս Թուղթս տարւոյս ամսաթերթերէն մէկուն մէջ, պարտ անձին համարիմ, եւ այլն:

ՅՈՎՀԱՆ ՔԱԼ. ՅԱՐՕՅԵԱՆՅ.

ՀԱՆԵԼՈՒԿ.

*Գըլխովս ու վիզովս օտարն է, ես չեմ.**Գըլուխս որ կըտրես, իսկոյն ան կընեմ.**Մընացած մասամբս եմ քաջ եւ կարող,**եւ բոլոր անձամբս ուխտի կատարող:*

Մայիսի Հանդուկն է ՈՁԻՆԶ, որոյ տառերուն բուսական նշանակութիւնն է 2420. վասն զի $n = 600 + 2 = 700 + 20 + 6 = 400 + 2 = 700$. քնդ ամենայն 2120.

Վերադիտող ամսագրոյս, ԳԱԲԲ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ՀՐԱՄԱՆԱԻ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ. Ի Թեոդոսիա, ի 26 Մայիսի 1865.

Ի Տպարանի Խալիպեան Ուսումնարանի ազգիս Հայոց.